ՆԱԵՎ ՄԻ «ՄԵՐՍԵԴԵՍ»՝ ՓԱԴԵՅ ՏԱՃԱՏՐՉԻՆ

ԳԱԱ Նախագահության երեկվա նիստում քննարկվեցին ակադեմիկոս Աշրի Ներսիսյանի կողմից ԳԱԱ Նախագահությանն ու Նախագահին ուղղված մեղադրանքների ուսումնասիրման արդյունքները:



Փադեյ Սարգսյանը Աշրի Ներսիսյանին դատի չի տա. Նա բավարարված է երեկվա քննարկումներից:

Ինքը՝ Աշրի Ներսիսյանը նիստին չէր ներկայացել, եւ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Էդուարդ Ղազարյանին խնդրել էր բազմացնել եւ նախագահության անդամներին բաժանել իր հատուկ կարծիքը հաճճնաժողովի աշխատանքների մասին: Նախագահության անդամների մեծ մասը եւ մասնավորապես ակադեմիկոս Վիլեն Հակոբյանն ըմբոստացան այս առիթով. *«Երկու տարուց ավելի նա վարկաբեկում է ակադեմիան եւ ինչ ասում է, նրա ասածով շարժվում եք, թող բարի լիներ՝ ներկայանար...Փադեյ Սարգսյանը չհիմնավորված ներողամիտ է»:* Իսկ Էդ. Ղազարյանը հայտարարեց, թե Ա. Ներսիսյանը խախտել է պայմանավորվածությունը, ըստ որի՝ պետք է իր հատուկ կարծիքը ներկայացներ հաճճնաժողովի եզրակացությունից հետո, սակայն մինչ այդ մամուլի ասուլիս է հրավիրել ու իր հատուկ կարծիքը հայտնել: Ասենք, որ պրն Ներսիսյանն իր հերթին ասուլիսի ժամանակ հայտնեց պայմանավորվածության մասին եւ լրագրողներին ծանոթացրեց իր մեղադրանքների բովանդակությանը միայն՝ առանց ներկայացնելու իր հատուկ կարծիքը: Երեկ Ա. Ներսիսյանի հատուկ կարծիքը շընթերցվեց, ավելի ուշ մեզ հաջողվեց մանրամասնություններ իմանալ այդ փաստաթղթից, որոնցից ներկայացնենք մեկը: Չարաշահումների մասին, ի թիվս այլ մեղադրանքների, Ա. Ներսիսյանը ներկայացրել էր եւս մեկը, ըստ որի՝ ԳԱԱ-ին ՀՀ կառավարությունը «Մերսեդես» մակնիշի մեքենա է հատկացրել, որը Փադեյ Տաճատիչը վերցրել է իրեն՝ վճարելով շուկայականից անհամեմատ ցածր գին: *«Արդյոք այդպես չէ՞»* հարցնում է Ա. Ներսիսյանն այդ փաստաթղթում: Հարցի պատասխանը թերեւս այդպես էլ չհնչի, քանի որ Փադեյ Սարգսյանը երեկ հրաժարվեց՝ այլեւս այս թեմաներով քննարկումներ չկազմակերպել եւ չանդրադառնալ ոչ մի հարցի. *«Ուզում եք վարկաբեկեք՝ նոր գնա՛մ, տարբեր երկրներից զանգում, ինձ ասում են, որ պետական հեռուստատեսությամբ ինձ վարկաբեկել են: Ես սովոր եմ օրենքով, կանոնադրությամբ աշխատել: Ճիշտ է, թույլ եմ տվել, որ ակադեմիայի շենքեր վաճառվեն, բայց ես վաճառելու իրավունք չունեմ, կա հիմնադիր...»,*- բղավում էր ԳԱԱ նախագահը՝ նախ շեշտելով, որ շենքեր չեն վաճառվել, այլ՝ որ դա անում է կառավարությունը, եւ ինքն այդտեղ ոչ մի կապ չունի:

Փադեյ Սարգսյանի՝ հրաժարական տալու տրամադրությունները երեկ ակտիվորեն կանխում էր նրա համակիրների մեծ բանակը: Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն Լավրենտի Բարսեղյանը նույնիսկ նրան հանդիմանեց՝ *«Չհամարձակվեք հրաժարական տալ»,* եւ խոստացավ հրապարակում միտինգ անել, եթե հանկարծ շեֆը հրաժարական տա. *«Փադեյ Սարգսյանի անունը ոսկե տառերով պետք է գրել պատմության էջերում եւ այլն...»:* Աշրի Ներսիսյանին անձնական վիրավորանք հասցնելու հարցում ջանք ու եռանդ չէին խնայում նախագահության իրավաբան Յուրի Ղազարյանը, հաճճնաժողովի նախագահ Յուրի Չիլինգարյանը:

Ակադեմիկոս Լեւսեր Աղայովյանը՝ իր հերթին հարցեր հղեց հաճճնաժողովի անդամներին: Մասնավորապես այն մասին, թե արդյոք ճիշտ չէ՞ Ա. Ներսիսյանի մեղադրանքը, թե այսօր ԳԱԱ-ն ստանում է նույնիսկ վախճանված անդամների պատվավճարները: Հաճճնաժողովի անդամ, ԳԱԱ հաշվապահ Հոփփսիմե Հարությունյանը, երկար ժամանակ փորձելով խուսանավել, վերջապես ասաց, որ դա այդպես է եւ կառավարությունն է թույլ տվել ստանալ այդ գումարները, որոնք, ըստ հաշվապահի, նախսվում են ինստիտուտների որոշակի պարտքեր մարելու համար, իսկ ըստ Ներսիսյանի, այդ գումարներով նախագահությունը 13-րդ աշխատավարձ է ստանում:

Ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը հայտարարեց, որ իր գործունեության 12 տարիներին Փադեյ Սարգսյանը մթության մեջ է գործել ու նրա մութ գործարքներից նախագահությունը ոչ մի անգամ տեղյակ չի եղել: Նաեւ ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ կանոնադրությամբ բյուրո կոչվածը միայն խորհրդատվական կառույց կարող է համարվել եւ իրավունք չունի ֆինանսական գործունեություն ծավալելու, որոշումներ կայացնելու: Փադեյ Սարգսյանն ու համակիրները ոչնդում էին, որ բյուրոն եղել է դեռ Վիկտոր Համբարձումյանի օրոք, սակայն այդ վերջին փաստը ամենեւին թույլ չէր տալիս առացուցել, որ իսկապես այդ բյուրոն իրավունք ունի կամայական ֆինանսական գործարքներ իրականացնել: Հաճճնաժողովի նախագահ Յու. Չիլինգարյանն ընդունում է, որ բյուրոյի գործունեությունն օրինական չէ. *«Ճիշտ կլիներ, որ օրինականացվեր բյուրոյի ստեղծումը»:* Եվ սա միակ սխալը չէ, որ նա խոստովանում է: Հաճճնաժողովի եզրակացության համաձայն, արձանագրված է, որ իսկապես կանոնադրական խախտումներ ակադեմիայում կան: Նախ՝ որ արդեն 6 տարի իսկական եւ թղթակից անդամների ընտրություն չի եղել (այն պետք է լինի ոչ ուշ, քան 3 տարին մեկ) եւ որ ընդհանուր ժողովները տարին 2 անգամ չեն գումարվում: Հաճճնաժողովն այստեղ եզրակացրել է, որ ճնճ թերություններ գրանցվել են անցյալ դարի 50-ական թվականներից: Երեկվա նիստում համոզվեցինք, որ 50-ականներից հետո ակադեմիայում շատ բան չի փոխվել:

ՀԱՍՄԻԿ ԲՈՒԴՂՅԱՆ